ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2339-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2024 թվականի ___ _____ N _____ Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2339-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության **2023 թվականի դեկտեմբերի 28-ի** «Անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճար տրամադրելու միջոցառումը և կարգը հաստատելու մասին» N 2339-Լ որոշման՝

1) N 1 հավելվածում՝

ա. 3-րդ կետի 7-րդ ենթակետից հանել «, ինչպես նաև կենսաթոշակային քարտը թողարկած բանկի բանկոմատներում և նույն բանկի էլեկտրոնային հավելվածի միջոցով կոմունալ ծառայությունների (գազի, էլեկտրաէներգիայի, խմելու ջրի, ֆիքսված և բջջային հեռախոսի մատակարարման ծառայություններ) դիմաց կատարված վճարումներից» բառերը.

բ. 4-րդ կետում «10» թիվը փոխարինել «12» թվով.

գ. 5-րդ և 6-րդ կետերում «5000» թիվը փոխարինել «6000» թվով,

2) N 2 հավելվածում՝

ա. 4-րդ կետը «վճարվում է» բառերից հետո լրացնել «(ծառայությունը բանկին փոխանցում է)» բառերով.

բ.5-րդ կետում «Հետվճարները հաշվարկվում և վճարվում են» բառերը փոխարինել «Հետվճարները հաշվարկում և վճարում է ծառայությունը՝» բառերով.

գ. 7-րդ կետում «՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը» բառերը փոխարինել ««Էքսել» ֆորմատի ֆայլով, «յունիկոդ» տառատեսակով)՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը» բառերով.

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին կետով.

«7.1. Սույն կարգի 7-րդ կետում նշված տվյալները բանկի կողմից Ծառայությանը մեկից ավելի անգամ տրամադրելու դեպքում հիմք է ընդունվում սույն կարգի 7-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացված վերջին տվյալը.».

ե. 8-րդ կետում «կազմում է վճարման ցուցակ» բառերը փոխարինել «սույն կարգի N 3 ձևով սահմանված տվյալները (այսուհետ՝ վճարման ցուցակ) մինչև տվյալ ամսվա 25-ը տրամադրում է բանկին» բառերով.

զ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Բանկը հետվճարը պետական բյուջե չի վերադարձնում։ Բանկային հաշիվը փակված լինելու կամ տեխնիկական պատճառներով գումարը հաշվին չփոխանցելու դեպքում կենսաթոշակառուի դիմումի հիման վրա հետվճարի գումարը վճարում է բանկը՝ իր սահմանած եղանակով։ Հետվճարը բանկին փոխանցելու ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում չվճարելու դեպքում բանկը գումարը վերադարձնում է պետական բյուջե՝ միաժամանակ ծառայությանը տրամադրելով սույն կարգի N 2 ձևով սահմանված տվյալները։ Սույն կետում նշված 12 ամսյա ժամկետից հետո հետվճարը վճարման ենթակա չէ։».

է. 9-րդ և 11-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել։

3) N 1 Ձևի՝

ա. 4-րդ կետից հանել «Պարբերական դրամական վճարի գործի համարը և» բառերը.

բ. 4-րդ կետում «։» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5. Անկանխիկ գնումների և վճարումների գործարքների կատարման ամիսը, տարեթիվը, ցանկը ուղարկելու օրը, ամիսը, տարեթիվը։»,

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ N 3 Ձևով.

«**Ձև N 3**

Ց Ա Ն Կ

ՎՃԱՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ ՆԵՐԱՌՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ Է ԲԱՆԿԻՆ

1. Բանկի անվանումը (ծածկագիրը).

2. Շահառուի անունը, ազգանունը, առկայության դեպքում՝ հայրանունը.
3. Շահառուի անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը.
4. Վճարման ենթակա գումարի չափը.
5. Վճարման ցուցակն ուղարկելու օրը, ամիսը, տարեթիվը։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից։

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2024 թվականի ___ _____ N _____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 284-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 12-ի «Լիազորած պետական մարմին ճանաչելու, սոցիալական ապահովության հաշվի պայմանագրի օրինակելի ձևը, սոցիալական ապահովության հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալների ցանկը և սոցիալական ապահովության հաշվին մուտքագրելու միջոցով վճարվող գումարները սահմանելու մասին» N 284-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 6-րդ ենթակետում «10» թիվը փոխարինել «15» թվով, և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Սույն ենթակետում նշված ժամկետում կետում նշված տվյալները չտրամադրելու դեպքում հետվճարը վճարում է տվյալ բանկը՝ իր միջոցներից և իր սահմանած եղանակով: Բանկային հաշիվը փակված լինելու կամ տեխնիկական պատճառներով գումարը հաշվին չփոխանցելու դեպքում հետվճարը բանկին փոխանցելու ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում չվճարվելու դեպքում բանկը գումարը վերադարձնում է պետական բյուջե։»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 1-ից։